«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7"3»

ք. Կապան

«11» փետրվար 2019թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի գինը կազմում է 6911738(վեց միլիոն ինը հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրում նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրում նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքը մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի հպմար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Կարեն Մելքոնյան	Տնօրեն Ա.Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոփոխության ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավել
«11» փետրվար 2020 թ. կ
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7"3 ծածկագրով պայմանա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	33651131/501	Սուլֆապրիմ օշարակ 100մլ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանային 22	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ 200մգ/5մլ+40մգ/5մլ; 100մլ ապակե 22հիկ դեղակախույթ ներքին ընդունման	հատ	1459.15	218873	150	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել	2020 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու
4	33671115/501	Սուլֆոկամֆոկային ամպ. 10% 2մլ №10	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ	սուլֆոկամֆորաթթու, պրոկայինի հիմք 49,6մգ/մլ+50,4մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման	հատ	75.46	37730	500			
5	33631360/501	Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5մլ №10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպիլսկա	սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) 20մգ/մլ; ամպուլներ 5մլ լուծույթ ներարկման	հատ	183.00	27450	150			

			փ., 13, Ուկրաինա								
6	3362162 0/501	Սպիրոլուն 25մգ դ/հ №50	Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ Ինդուստրիալ Իստեյտ, Աիարնոն փ., 3056 Լիմասոլ¶	սպիրոնոլակտոն 25մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	35.30	353000	10000			օ... հաշվ... օրացույց... օր հետո՝1-... փուլի համա... /եթե մատակարար ը չի համաձայնվու մ մատակարար ել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրա քանչյուր անգամ Պատվիրատու ից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքայ ին օրվա ընթացում:
7	3365115 7/501	Ստրեպտոմ իցին դ/փոշի սրվ. 1գ	Կիևմեդպրեպար ատ ՀԲԸ, 01032, Կիև, Սակսագանսկոգ ո փ., 139	ստրեպտոմիցին (ստրեպտոմիցինի սուլֆատ) 1000մգ; ապակե սրվակ,դեղափոշի ներարկման լուծույթի	հատ	149.60	14960	100			
8	33621110 /501	Վարֆարին դ/հ 2,5մգ №100	Տակեդա Ֆարմա Սպ.զ o.o.,12 Կսիեստվա Լովիցկիեգո փ.,	վարֆարին (վարֆարին նատրիում) 2,5մգ; դեղահատեր	հատ	14.00	7000	500			
9	33621110 /502	Վարֆարին դ/հ 5մգ №100	Օրիոն Քորպորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպու	վարֆարին (վարֆարին նատրիում) 5մգ դեղահատեր	հատ	30.00	30000	1000			
10	3362173 0/501	Վերապամիլ ամպ. 0,25% 2մլ №10	Ալկալոիդ	վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 2,5մգ/մլ; ամպուլներ 2մլ, լուծույթ ներարկման	հատ	387.00	38700	100			
11	3362173 0/502	Վերապամիլ դ/հ 40մգ №30	Ալկալոիդ ԱԴ-Սկոպյե	վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 40մգ;դեղահատեր թաղանթապատ	հատ	16.10	43470	2700			
12	3362173 0/503	Վերապամիլ դ/հ 80մգ №30	Ալկալոիդ ԱԴ-Սկոպյե	վերապամիլ (վերապամիլի հիդրոքլորիդ) 80մգ;դեղահատեր թաղանթապատ	հատ	23.10	69300	3000			

17	3369117 6/517	Տերժինան հեշտոց. մոմիկ №10	Սոֆարտեքս, 21 ռուե դու Պրեսո, 28500 Վերնույե¶	տերնիդազոլ, նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), նիստատին, պրեդնիզոլոն (պրեդնիզոլոն նատրիում մետասուլֆոբենզոատ) 200մգ+65000ՄՄ+1000 00ՄՄ+3մգ, դեղահատեր հեշտոցային	հատ	360.00	18000	50			
18	3369117 6/518	Տոբրոմ ակնակաթիլ ներ 0,3% 5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ	տոբրամիցին 3մգ/մլ; 5մլ պլաստիկե շիշ-կաթոցիկ ակնակաթիլներ	հատ	1242.00	186300	150			
21	3369117 6/519	Տրիգրիմ դ/հ 5մգ №30	Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելպլինսկ ա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի	տորասեմիդ 5մգ;դեղահատեր	հատ	72.00	72000	1000			
22	3369117 6/520	Ալտե օշարակ 5% 125գ	Դեղագործական Արտադրական Ձեռնարկություն ԳԵՄԻ	տուղտի արմատի հանուկ 349մգ/գ; 125գ ապակե կամ պլաստիկե շիշիկ և չափիչ բաժակ օշարակ	հատ	670.00	33500	50			
23	3369122 6/501	Տրամադոլ-Մ ամպ. 5% 2մլ №5	«ԻՍԴՁ «Զդորովյե Նարոդու» ՍՊԸ	տրամադոլ (տրամադոլի հիդրոքլորիդ) 50մգ/մլ; ամպուլներ 2մլ լուծույթ ներարկման	հատ	78.00	117000	1500			
25	3369150 0/501	Տրանեկսամ դ/հ 250մգ №10	Օբնինսկի Քիմիադեղագործական Ընկերություն ՓԲԸ, 249036, Կալուգայի շրջան, ք. Օբնինսկ,	տրանեքսամաթթու 250մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	279.52	13976	50			

			Կիևսկոյե շոսե, շ 103, շ 107								
26	33691500/502	Տրանեկսամ ամպ. ն/ե 50մգ/մլ 5մլ №10	"Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՉ", 25, Նովոխոխլովսկայա փ., Մոսկվա, 109052¶	տրանեքսամաթթու 50մգ/մլ; ամպուլներ 5մլ լուծույթ ն/ե կաթիլաներարկմա	հատ	1667.20	500160	300			
28	33621310/501	Սետալ MR №60	Պոլֆարմեքս Ս.Ա	տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) 35մգ;դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ	հատ	42.00	84000	2000			
38	33651118/502	Ցեֆտրիաքսոն ն/ե և մ/մ սրվ. 0.5գ	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան" ԲԲԸ	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ; ապակե սրվակ դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	հատ	185.00	740000	4000			
39	33621240/501	Ցիանկոբալամին ամպ. 500մկգ/մլ 1մլ №10	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճա	ցիանոկոբալամին 500գր, ամպուլներ 1մլ	հատ	18.90	9450	500			
41	33691222/501	Ցինարիզին դ/հ 25մգ №50	Սոֆարմա ԲԸ	ցինարիզին 25մգ դեղահատեր	հատ	5.10	1020	200			
42	33611230/501	Ցինկիտ լուծվող դ/հ №20	Վերվագ	ցինկի սուլֆատ դեղահատ	հատ	122.09	12209	100			
43	33631150/501	Ցինկ քսուք 10% 25գ	Էսկո-Ֆարմ ՍՊԸ, Նոր Նորք, Միկոյան 13, Երևան	ցինկի օքսիդ 100մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ քսուք արտաքին կիրառման	հատ	222.4	11120	50			

44	3365113 4/501	Ցիպրոֆլոքս ացին դ/հ 250մգ №10	"Բորիսովյան բուժպատրաս-տուկների գործարան" ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան	ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) 250մգ;դեղահատեր թաղանթապատ	հատ	18.50	9250	500			
47	3365113 4/504	Ցիպրոֆլոքս ացին դ/հ 500մգ №10	"Բորիսովյան բուժպատրաս-տուկների գործարան" ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան	ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ) 500մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	34.50	103500	3000			
50	3369117 6/523	Ցերաքսոն ամպ. 1գ 4մլ №5	Ֆերեր Ինտերնեյշընլ, Ս.Ա., Ջոան Բուսկալա, 1-9 08173 Սանտ Կուգատ դել Վալես, Բարսելոնա	ցիտիկոլին 1000մգ/4մլ;ամպուլներ 4մլ լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	հատ	1295.00	259000	200			
51	3365113 5/501	Լևոմիցետի ն դ/փոշի սրվ. 1գ №1	Կիևմեդպրեպարատ ՀԲԸ, 01032, Կիև, Սակսագանսկոգո փ., 139	քլորամֆենիկոլ 1000մգ; ապակե սրվակ դեղափոշի ներարկման լուծույթի	հատ	560.80	28040	50			
52	3365113 5/502	Սինտոմիցի նի նրբամածուկ 10% 25գ	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Սալգանսկայա փ., 7¶	քլորամֆենիկոլ 100մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ հեղուկաքսուք	հատ	720.80	21624	30			
53	3365113 5/503	Սինտոմիցի նի	Էսկո-Ֆարմ ՍՊԸ, Նոր Նորք,	քլորամֆենիկոլ 50մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ, հեղուկաքսուք	հատ	288.00	8640	30			

		նրբամածուկ 5% 25գ	Միկոյան 13, Երևան								
54	33631200/501	Մեկոլ-Բորիմեդ . քսուք 40գ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ 7,5մգ/գ+40մգ/գ; 40գ ալյումինե պարկուճ քսուք արտաքին կիրառման	հատ	227.00	22700	100			
55	33631240/501	Հեքսիլոք լուծույթ 22իկ 0,05% 250մլ	Արսանիտ ՍՊԸ, Երևանյան փ. 110, Մասիս՝ բաց թողնման հ	քլորհեքսիդին (քլորհեքսիդինի դիգլյուկոնատ) 0.5մգ/մլ; 250մլ ապակե կամ պլաստիկե սրվակ	հատ	740.00	370000	500			
57	33651254/501	Ֆեմարա դ/հ 2,5մգ №30	Նովարտիս Ֆարմա Շտեյն ԱԳ, Շաֆհաուզերշտրասե, 4332 Շտեյն	լետրոզոլ 2.5 գ դեղահատեր թաղանթապատ	հատ	640.00	1920000	3000			
58	33691203/501	Լորիստա թ/պ դ/հ 100մգ №28	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո, Սմարյեսկա փ. 6, 8501 Նովո Մեստո	լոզարտան 100 մգ	հատ	57.00	57000	1000			
59	33691236/502	Սուպրաստին դ/հ 25մգ №20	Լեկֆարմ-Խարկով ԲԸ	քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) 25մգ; դեղահատեր	հատ	41.68	41680	1000			
60	33691176/524	Ակվավիտ-D3 ջրային լուծույթ 10մլ	«Տեխնոլոգ» ՀԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Չե	քոլեկալցիֆերոլ ջրային լ-թ 10 մլ	հատ	472.00	944000	2000			
61	33671116/501	Գալոզիլոք քթակաթիլներ 0,05% 10մլ	Արսանիտ ՍՊԸ, ք. Մասիս, Երևանյան 110՝ բաց թողնման հ	քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) 0,5մգ/մլ; 10մլ պլաստիկե սրվակ-	հատ	360.00	36000	100			

				կաթոցիկ քթակաթիլներ, լուծույթ							
64	3369117 6/525	Նազիլոք քթակաթիլն ·եր 0,025% 10մլ	Արսանիտ ՍՊԸ	օքսիմետազոլին (օքսիմետազոլինի հիդրոքլորիդ) 0.25մգ/մլ; 10մլ պլաստիկե շշիկ ցողաշիթ քթի	հատ	665.00	13300	20			
67	33611120 /502	Ֆամոտիդի ն դ/հ 0,02գ №20	«Բորիսովյան բուժպատրաստո ւկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան ¶	ֆամոտիդին 20մգ; դեղահատեր թաղանթապատ	հատ	12.67	12670	1000			
68	33611120 /503	Ֆամոտիդի ն դ/հ 0,04գ №20	«Բորիսովյան բուժպատրաստո ւկ-ների գործարան»	ֆամոտիդին 40մգ;դեղահատեր թաղանթապատ	հատ	32.90	32900	1000			
69	3366115 9/501	Մեզատոն ամպ. 1% 1մլ №10	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, Շևչենկո փ., 22, ք. Խարկով	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ)10մգ/մլ; ամպուլներ 1մլ,լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման	հատ	77.00	3850	50			
72	3369117 6/526	Բերոդուալ ինհալացիայ ի համար 200դ/չափ 20մլ	Բերինգեր Ինգելհայմ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ	ֆենոտերոլ (ֆենոտերոլի հիդրոբրոմիդ), իպրատրոպիումի բրոմիդ (իպրատրոպիում բրոմիդի մոնոհիդրատ) 500մկգ/մլ+261մկգ/մլ; 20մլ ապակե տարա լուծույթ շնչառման	հատ	3240.00	162000	50			
75	3365115 0/501	Ֆլուկո դ/պ 150մգ №10	ՍԹուֆենկջի Ֆրուպ ՍՊԸ	ֆլուկոնազոլ 150մգ; դեղապատիճներ,	հատ	58.00	29000	500			
76	3361147 0/502	Նոլպազա թ/պ դ/հ 40մգ №28	ԿՈԿԱ դ.դ.	պանտոպրազոլ 40 գր դեղահատեր աղելույծ	հատ	62.80	31400	500			

82	3365114 6/501	Ֆուրազոլիդոն դ/հ 50մգ №10	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան	ֆուրազոլիդոն 50մգ; դեղահատեր	հատ	3.33	666	200			
83	3362159 0/501	Ֆուրոսեմիդ ամպ.1% 2 մլ №10	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան	ֆուրոսեմիդ 10մգ/մլ; ամպուլներ 2մլ,լուծույթ ներարկման	հատ	26.7	133500	5000			
96	3369120 7/501	Պիմաֆուցի ն մոմիկ 100մգ №3	Յամանուչի	նատամիցին 100մգ; մոմիկներ հեշտոցային	հատ	1060.00	31800	30			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

****Ծանոթություն**

Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

** Որակի սերտիֆիկատների առկայություն*

Ծանոթություն – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

• Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

******Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

*******Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:***

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավելանալ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը:, Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Հասցե՝ ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Կարեն Մելքոնյան	Տնօրեն Ա.Ասատրյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ